

շինուած ըլլալու է Կարապետ Պատրիարքին օրով,
այսինքն 1823—1831 ժամանակամիջոցին, նկա-
տելով՝ որ Յ. Պէղծեան Ամիրայնն ջած է՝ 1834ին:

Ինամով ժողովել տալով կոտորուած այս
արձանաքարը, իսկոյն փոխադրել տուի զայն Եկե-
ղեցոյն պահարանը, ուր կը պահուէր արդէն այդ
Ս. Յարութիւն տաճարին սեղանի մէկ խաչքարը
եւ սեան ոտքը:

ՏՈՂ 153: «Իպրահիմ Սուլթան», տի-
րած է 1640—1648 եւ գահէն վար առնուե-
լով խեղդամահ սպաննուած է: Ասոր յաջորդած
է իր որդին Սուլթան Մէհմէտ Գ. (1648—
1687), որու մեծ վէզիրներէն (Եպարքոս) եղած
է 1656ին՝ մի ոմն Էրմէնի Սիւլէյման բաշա¹:
Սարգիս Գպիր Սարաֆ Յովհաննէսեան, իր հե-
ղինակած ձեռագիր Օսմ. Պատմութեան մէջ՝ որ
քովս է, այս Սիւլէյման բաշային համար կը գրէ,
թէ էր Հայկազարմ Մալաթիացի. տաճկցած
Հայ մէր այն ուրեմն:

136—190 ՏՈՂԵՐՈՒՆ մէջ յիշուած Ղա-
թիոյ Բերդին դուռներուն վրայ ատենօք կան
եղեր լատիններէն Արձանագրութիւններ, զորս
Երանելի մեր կոմիտաս քահանայ քեօմիւրճեանի
թուր կողմաս, որ Բառուցոնեան անունով թարգ-
ման եղած է Կ. Պոլսոյ Սպանիական դեսպանատու-
նին², իւր խաչերէն լեզուով շարագրած³, եւ
1794ին Բասսանօ քաղաքը տպագրել տուած
«Նկարագրութիւն Կ. Պոլսոյ» անուն երկին
մէջ նոյնութեամբ դրած է, հարկ եղած լուսատու
մեկնութիւններն ալ գրելով անոնց վրայ⁴:

ՏՈՂ 196, 197, 198:

«Զսա շինեն Կաֆայեցի՝ պազիրկեանքն
յանուն նախնական,
Որոց մասն ի լեհ անկեալ՝ ՚իստամպօլ տե-
ղացիք կոչման.
Թիւն ութն հարիւր ութսուն հինգ՝ ընդ յու-
նաց տիրապետութեան:»

(Շարտանակողի:) ԴԿՏ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐՂՈՍԵԱՆ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Մ Ա Ն Բ Ո Ւ Է

(Շարտանակողի:) :

6. լայն, ձայն:

Ա. Մէյէ դրում է. «լայն բառի վստա-
հելի մեկնութիւնն անծանօթ է» (Rev. d. ét.
arm., հատ. IV, պր. 1, էջ 3): Մի ուրիշ տեղ
(Gram. էջ 21) նա ասում է. «լայն հաւանօ-
րէն ներկայացնում է **plōthēi lōn*, հմ. յուն.
πλατός լայն, լատ. *planta*, լիտ. *splisti*
—տարածուիլ»: Մի խօսքով՝ լայն բառը լա-
չէ մեկնուած:

Ինձ թւում է, որ լայն բառը մի նախա-
ւոր ձեւի ամփոփումն է: Ես նկատած եմ,
որ նգ հնչնախոււմը երկու ձայնաւորի մէջ
եղած ժամանակ իր տեղը զիջում է կեսա-
ձայն յ-ին: Այսպէս կանգնել — կայնել:
կանգնել բայը նախաւոր *կանգանել ձեւի
ամփոփումն է, հետեւապէս նգ ընկած է եր-
կու ձայնաւորի միջեւ: (Հմ. սպաննել): Այս
հիման վրայ կարող ենք ասել, որ կայան իբր
նախաձեւ ենթադրում է *կանգան եւ կայուն
— *կանգուն (հմ. շարժուն, սողուն եւ
այլն): Վերջապէս կայ (ոչ իբր եղ. Յգ դէմք
կամ բայի, այլ իբր կացութիւն, կեցուածք),
որի բունն է կայի (հմ. կայի, կայից,
կայիւք) ենթադրում է մի նախաւոր *կան-
գի ձեւ, ուր նգ նոյնպէս երկու ձայնաւորի
մէջ է ընկած եւ դարձած է յ:

Այս երեւոյթը շատ հին է. նա նկատելի
է եւ մեր նախազրական շրջանում: Դրա
սպացոյցն է մեր դասական յիսուն բառը,
որ Ա. Մէյէ իրաւամբ վերականգնում է իբր
*հինգսուն (Gram., էջ 73) իսկ ն. Մառ իբր
*հինգիսուն (Грамм. др. арм. яз., էջ 16): Հա-
ւանականը Ա. Մէյէի վերականգման է, ուր
նգ երկու ձայնաւորի մէջ լինելով՝ պիտի
դառնար յ եւ տար *հիյսուն ձեւը. իսկ յ-ն
իբր նոյներանգ իրանից առաջ եկող ի ձայ-
նաւորին՝ պիտի ձուլուէր նրա հետ եւ բառը
դարձուէր *հիսուն, որ է յիսուն:

Այս օրէնքի հիման վերայ ես յետադարձ
հոլովոյթով լայն բառը վերականգնում եմ
իբր *լանգն, որ հնչուած է *լանգըն, այս-
ինքն վերջին վանկին մէջ ունեցած է մի ձայ-
նաւոր, որ աի հետ կալ մէջ անելով նգ

¹ Եղեալ Բե-լադիւն, Հ. Ղ. Ինճիճեան, Վենետիկ
1794, էջ 86:
² Աւերհ. Չոբեյ Բասանց Աւերհի, Հ. Ղ. Ինճիճեան,
1804, Հատոր Ե, էջ 156:
³ Ա՛ր, էջ 182:
⁴ Descrizione Topografica delle stato presente di Co-
stantinopolitano, Bassano, MDCCXCIV (1794), էջ 52—54: Այս
հարգաբերտ հատորը Կ. Պոլսոյ մէջ կը գտնուի միայն Օր-
թագիւղ Անտոնեաց Միաբանութեան Մատենադարանը.

խումբը՝ դարձրած է յ եւ *լանգրն ձեւին տուած է լայն կերպարանքը որից՝ լայն:

Վերականգնածս ձեւով մեր բառը կշռում է. լատ. long-um, որից Փր. long եւ դերմ. lang, բառերի հետ: Մի անգամ որ հասանք այս բառերին՝ դժուար չէ մեր լայն բառի բոլոր խնամիններին հաւաքել մի տեղ: Ենթադրածս *լանգրն ձեւի վերջին ծածուկ վանկը լաւապէս կշռում է լատ. long-um ձեւի վերջին վանկին:

Բերածս օրինակները բաւական էին հաստատելու համար նգ խմբի փոխարինումը յով՝ երկու-ձայնաւորի միջեւ ընկած ժամանակ: Այդ օրէնքի ուժով կարելի եղաւ զուգարել լայն եւ լատ. long-um, շիտակ ձամբան դուրս դալով՝ դժուար չէ բառերի օգնութեամբ հասնել մինչեւ այդ բառերի նախաձեւը:

Մեր լայն բառի համար բերածս օտար կշիռները նշանակում են երկար, մինչ դեռ մերը լայն, ընդարձակ է նշանակում: Բայց նախ՝ լատ. longus թէ՛ երկար է նշանակում եւ թէ՛ ընդարձակ. եւ ապա՝ մի դարձարից միւսին անցնելը իմաստաբանական երեւոյթ է եւ ոչ ստուգաբանական: Այն հանգամանքը որ պր. ۱۷ — գաւ բառը հայերէն էզ է եւ կոյլ է նշանակում, իսկ մեր հարեւան պարսկի համար որձ է եւ եզն է նշանակում՝ բնաւ արդեւք չէ, որ ստուգաբանօրէն սրանք նոյն բառերը լինեն: Այդպէս էլ մեր լայն բառն իմացէք, որ ուրիշ լեզուներում երկար է նշանակում:



Յիշածս օրէնքի հիման վրայ կարելի է ասել, որ հարազատ մայր ու աղջիկ են ձայն եւ զանգ բառերը (վերջին բառը չկայ Առձեռն բառարքի մէջ): Մի նախաւոր *ձանգրն ձեւից՝ վերը բերած հոլովոյթով՝ պիտի ծագէր *ձայրն, որից — ձայն: Իսկ *ձանգրն ձեւը կորցնելով իր նն՝ պիտի դառնար *ձանգ (հմ. դառն-դառ. դուռն-դուռ եւ այլն): Զանգ ձեւից ծագած է զանգ բառը $\acute{a} = \text{գ}$ հաւասարութեան հետեւանքով: Այս հաւասարութեան իբր ապացոյց հնգերոպական լեզուախմբի մէջ կարող է ծառայել մեր անեռն. ոռու. ЗИМ-а, պր. سانس, որ $\acute{a} = \text{գ}$, իսկ մեր սեփական տան մէջ՝ մարմարգ, մարմիկ-մարգիկ եւ ձէք եւ դաւառական գէթ: Շատ անգամ գն ձի քայքայման արդիւնք է:

Երբ թառի վրայ մի զարկով հաս ձայն ենք հանում՝ ասում ենք զրնգ, իսկ այդ ձայնը կոչում է զնգոց. շոնդուրի վրայ հասնած նոյնատեսակ ձայնին ասում ենք նրնգ, որից՝ ննգոց. յախճապակի ամանին ցուցամատի եղունգով հարուած տալուց առաջ եկած ձայնին ասում ենք ծրնգ, որից ծնգոց: Այս բոլոր բառերն ունին իրենց կրկնաւորը զնգզրնգոց, ննգննգոց ծնգծրնգոց: Առաւօտն անուշ քնից թարժաթ արած լացող երեխային մայրը սաստում է, «սո՛ւս կաց. հե՛րիք ժրնգաս, ժրգծրնգոցդ կտրի՛» — ուրեմն ժրնգ, որ առաձին լսած չեմ: Զրնգ, նրնգ, ծրնգ, ժրնգ բնաձայն բառերը մեր զանգ բառի բարեկամներն են եւ ձայն են նշանակում: Զա՞նգն է զրնգի ընդարձակում թէ՛ զէնգն է զանգի ամփոփում — այս խընդիրն առժամայէս թողում եմ բաց: Անվի՛-ձեւին դրանց խնամութիւնն է: Այս բառերի վրայ կարելի է տեսնել, որ ու եւ ծ լծորդ են եւ իրօք նախաջեմ — ծանեայ. նաեւ ձն լծորդ է, զի սրանցից մէկի քայքայումը տալիս է գ իսկ միւսի քայքայումը — ժ, որով՝ զրնգ որ է *ձրնգ եւ ժրնգ, որ է *ջրնգ: Ասում եմ քայքայումը՝ որովհետեւ $\acute{a} = \text{դգ}$ իսկ $\acute{z} = \text{դժ}$ է (Ն. Մառ, Грам., էջ 6): Նկատելով որ յայտնի է թէ $\acute{a} = \text{ծ}$ (խնձոր-խնձոր) — մենք ստանում ենք $\acute{a} = \text{ն} = \text{ծ}$: Այս հիման վրայ որոնումներ կատարողը շատ բան կարող է գտնել: Մեր լեզուն, որ չափազանց հարուստ է բնաձայն բառերով, կարող է բաւական զօրաւոր ապացոյցներ տալ այն տեսութեան համար, որի ասելով նախաւոր արմատների մեծազոյն մասը բնաձայններ են: Մենք տեսնք դրանցից մէկը — զընգ՝ ձայն: (Հմ. դերմ. singen, երգել. պրսկ. سنج, չանգ, մի նուագարան. վրաց. ჩანგ ჯანգիֆնար եւ այլն):

Ն. ԱՂԱՆԵՍՍ

